ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018թ. հոկտեմբերի 10 N 112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 958-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2008 թվականի ապրիլի 16-ի <<<<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության անվանափոխության և ընկերության կանոնադրության փոփոխության հաստատման մասին>> N 16 որոշմամբ հաստատված 1-ին կետում <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> բառերը փոխարինել <<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> բառերով:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրականացնել փոփոխված կանոնադրության պետական գրանցումը:
3. Սույն որոշման պահանջների կատարման ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Արտեմ Պետրոսյանին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ